7. Աշխարակ համայնքի կարիքների համար աղբատար և բազմաֆունկցիոնալ մեքենաների ձեռք բերում

Համայնքի կողմից լիազորությունների որակյալ իրականացման նպատակով անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել նոր, ժամանակակից աղբատար, բազմաֆունկցիոնալ և այլ գործառույթներ իրականացնող մեքենաներ:

Արդեն 2 տարի է, համայնքում նմանատիպ աշխատանքների կազմակերպման և որակյալ ծառայությունների կազմակերպման նպատակով վարձակալվում են նաև այլ մեքենասարքավորումներ: Վարձակալության գումարները կազմում են մոտ 1.5 մլն ՀՀ դրամ:

Նախորդ տարիներին համայնքն իր սուղ միջոցներով ձեռք է բերել աղբատար մեքենաներ, որոնք իրենց բարոյական և ֆիզիկական մաշվածությամբ էլի լրացուցիչ ծախսեր են առաջացնում համայնքի բյուջեի նկատմամբ: Մասնավորապես 2015-2019թթ.-ին ձեռք է բերվել 3 աղբատար մեքենաներ, որոնց ֆիզիկական վիճակը նորմալ է, բայց և ժամանակի ընթացքում իրենց ամորտիզացիոն ծախսերով ձեռնտու չեն:

Այսօր համայնքն ունի 7 աղբատար մեքենա, որոնց տարիքը միջինում 22 տարեկան է: Համայնքում նոր աղբատար մեքենայի ձեռք բերումը կապահովի հատկապես ամռան ամիսներին աղբահանության խնդրի կարգավորմանը:

Համայնքի տեսլականին հասնելու նպատակով մեծ թափով համայնքում իրականացվում են կանաչապատման աշխատանքներ, որոնք իրենց տեղաբաշխմամբ միշտ չէ, որ հասանելի է ոռոգման համակարգին: Համայնքն ունի 1 նմանատիպ մեքենա, որը նիրաբերվել է 2008թ.-ին, ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից:

Թե ամռան, և թե ձմռան ամիսներին համայնքն էլի վարձակալությամբ ձեռք է բերում ջրահավաք և ձնամաքրող մեքենաներ, որպեսզի հավուր պատշաճի իրականացնի ոռոգման, փողոցների լվացման, իսկ ձմռան ամիսներին նաև ձնամաքրման աշխատանքները:
Բազմաֆունկցիոնալ մեքենան կօգտագործվի ոչ միայն սանիտարական մաքրման և կանաչ տարածքների ոռոգման նպատակով, այլև ձմռան ամիսներին կվերափոխվի ձնամաքրող և հրաբխային խարամի և աղի խառնուրդի ցրող մեքենայի:

Աղբատար մեքենայի և բազմաֆունկցիոնալ մեքենայի ձեռք բերման դեպքում հնարավոր կլինի իրականացնել համայնքի բնականոն աղբահանությունն ու սանմաքրումը, կանաչ տարածքների պահպանմանն ուղղված աշխատանքները, ինչպես նաև այլ ծառայությունների մատուցումը:
Սա եզակի հնարավորություն է ապահովել և պահպանել բնակչության դրական վերաբերմունքն աղբահանության ու սանիտարական մաքրման նկատմամբ:
Նման աշխատելաոճի որդեգրումն արդեն ապահովում է աղբահանության վճարների հավաքագրման բարձր տոկոս: 2016թ-ի նկատմամբ 2019թ-ին աղբահանության վճարների հավաքագրումն ավելացել է մոտ 60 տոկոսով: 2016թ-ին աղբահանության վճարի հավաքագրումն եղել է 16695200 ՀՀ դրամ, 2019-ին 27883215 ՀՀ դրամ:
Այս ծրագիրը լիովին համապատասխանում է համայնքի զարգացման ռազմավարությանը և դրա իրագործումը շոշափելի ազդեցություն կունենա միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով:
Ծրագրի իրականացման արդյունքում կպահպանվի և կբարելավվի համայնքի բնակչության ապրելակերպը և կյանքի որակը՝ կանոնակարգված աղբահանություն, մաքուր և կանաչապատ բակեր և փողոցներ, պուրակներ, հնարավոր վարակների և համաճարակների բացառում, առնետների և այլ թափառող կենդանիների բազմացման համար նախադրյալների բացառում:

Ծրագրի արժեքը՝ 71050000 ՀՀ դրամ, որից համայնքի ներդրում՝ 42 630 000 ՀՀ դրամ